2022, № 1, 74-83 *Քաղաքագիտություն*
https://doi.org/10.46991/BYSU:D/2022.13.1.074

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԷԴԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հետպատերազմյան Եվրոպայի մի շարք երկրներում իրականացվեցին բարեփոխումներ ուղղված պետական կառավարման արդիականացմանն ու ժողովրդավարացմանը: Բացառություն չէր նաև Իտալիայի Հանրապետությունը: Երկրի սահմանադրական ինստիտուտների պատմությունը անցել է սահմանադրական միապետության, տոտալիտար ֆաշիստական բռնապետության միջով՝ ձևավորելով հետպատերազմյան Եվրոպայի ամենադեմոկրատական սահմանադրությունը:

Իտալիայի Սահմանադրությունը հստակ կարգավորում է պետական կառավարման մարմինների համակարգը, որը հիմնված է իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա: Այս ամենը կյանքի է կոչվում ընտրական համակարգերի կանոնակարգմամբ: Դրանք Իտալիայում բավականին հաճախ են ենթարկվել փոփոխությունների՝ հանգեցնելով ներքաղաքական ճգնաժամերի: Դա պայմանավորված է ոչ միայն ներխորհրդարանական անկայուն իրավաքաղաքական կառուցակարգերով, այլև որոշ դեպքերում նույնիսկ քաղաքական կուսակցությունների տարաձայնություններով:

Բանալի բառեր - *պետական կառավարման համակարգ, ընտրական համակարգ, սահմանադրական կարգ, կառավարման ձև, օրենսդրական գործընթաց, խորհրդարան, մանդատների բաշխում, խորհրդարանական կառավարում, սահմանադրական փոփոխություններ, համամասնական ընտրական մոդել, քվեարկություն, կառավարական ճգնաժամ, քաղաքական ճգնաժամ, արդյունավետ կառավարում*

Սահմանադրական կարգն ու զարգացումը յուրաքանչյուր պետության ներսում քաղաքական գործընթացների բնույթն ու հիմնական առանձնահատկությունները բնութագրող կարևոր ցուցիչներ են:

Այս համատեքստում հատկանշական է Իտալիայի սահմանադրական զարգացումը, որտեղ պետական կառավարման ինստիտուտների պատմությունը անցել է սահմանադրական միապետության, տոտալիտար ֆաշիստական բռնապետության միջով, իսկ արդեն 1946 թվականից հետո անցում կատարել ժողովրդավարության, որի պսակը համազգային հանրաքվեով ընդունված հետպատերազմյան Եվրոպայի ամենաժողովրդավարական սահմանադրությունն էր:

Ֆաշիզմի դեմ պայքարը Իտալիայում, ինչպես նաև եվրոպական այլ երկրներում սկիզբ դրեց ներքաղաքական կառուցվածքների արմատական փոփոխությունների, որը երաշխիք դարձավ բռնապետությունից ժողովրդավարության անցման համար: Հետպատերազմյան առաջին եռամսյակը Իտալիայի պատմության մեջ ունեցավ կարևոր նշանակություն. հին, ամբողջատիրական կառուցակարգերը վերացվեցին՝ հիմք դնելով պետական

կառավարման առավել ժողովրդավարական ինստիտուտների ձևավորմանը: Նոր Իտալիան ծնվեց հնի և նորի սուր պայքարի բովում:

Ժողովրդավարության անցման գործընթացում կարևորագույն իրադարձությունը եղավ 1946 թվականի հունիսի 2-ի հանրաքվեն, որով վերացվեց միապետությունը, իսկ նույն թվականի հուլիսի 18-ին Իտալիան պաշտոնապես հռչակվեց հանրապետություն, և ձևավորվեց առաջին ներկայացուցչական մարմինը՝ Հիմնադիր ժողովը[1]: 1945-1947 թթ. դրվեցին իտալական պետության ինստիտուցիոնալ, քաղաքական և իրավական հիմքերը:

1947 թ. վերջին Հիմնադիր ժողովն ընդունեց սահմանադրությունը, որն ուժի մեջ մտավ 1948 թ. հունվարի 1-ին[2]: Իտալիայի Սահմանադրության ժողովրդավարական բնույթն ամրագրվում է անձի իրավական կարգավիճակի մանրամասն կարգավորմամբ (Եվրոպայում այդ ժամանակահատվածում առաջին անգամ էր, որ սահմանադրության տեքստի շուրջ 40%-ը նվիրված էր անձի իրավունքներին և ազատություններին)՝ երկիրը ժողովրդավարական հանրապետություն հռչակելով, բազմակուսակցական համակարգի, կառավարման խորհրդարանական մոդելի ընդունմամբ, ինչպես նաև պետության աշխարհիկությամբ[3]:

Իտալիայի Սահմանադրությունը հստակ կարգավորում է պետական կառավարման մարմինների համակարգը, որը հիմնված է իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա: Պետության գլուխը համարվում է նախագահը (Il Presidente della Repubblica), օրենսդիր իշխանությամբ օժտված է երկպալատ խորհրդարանը (Il Parlamento), որը բաղկացած է Պատգամավորների պալատից (La Camera dei deputati) և Սենատից (Il Senato della Repubblica), գործադիր իշխանությունն իրացնում է կառավարությունը (նախարարների խորհուրդը) (Il Governo, Il Consiglio dei ministri), դատական իշխանությունը՝ դատարանները (La Corte Costituzionale)[4]:

Իտալիան խորհրդարանական երկիր է: Խորհրդարանի ձևավորման գործընթացը անցել է բավական բարդ կառուցակարգերի և որոշ դեպքերում նույնիսկ ճգնաժամերի միջով: Մեծ ուշադրության է արժանի հատկապես խորհրդարանի ձևավորման ընթացակարգերի ուսումնասիրությունը՝ կառուցվածքային և գործառութային ուշագրավ առանձնահատկություններով:

Սահմանադրությամբ հստակ սահմանվում են օրենսդիր իշխանության կառուցվածքը, խորհրդարանի երկու պալատների ձևավորման կառուցակարգերը, ինչպես նաև օրենսդրական ողջ գործընթացը: Ըստ Սահմանադրության՝ միայն խորհրդարանն է ընտրվում քաղաքացիների ուղղակի քվեարկությամբ: Նրան է պատկանում պետության քաղաքականությունն ամբողջությամբ որոշելու բացառիկ իրավասութ-

---

[1] Տե՛ս Իտալիայի Հանրապետության հռչակման պատմություն, 02.06.1946, https://www.focus.it/cultura/storia/2-giugno-1946-nasce-la-repubblica-italiana

[2] Տե՛ս Իտալիայի Հանրապետության Սահմանադրություն, 22 դեկտեմբեր 1947 թ., https://www.senato.it/documenti/repository/istituzione/costituzione.pdf:

[3] Տե՛ս **Авакьян С. А.** Конституционное право зарубежных стран, Челябинск. ЮУрГУ, 2008, էջ 175:

[4] Տե՛ս **Է. Քալանթարյան,** Իտալիայի պետական կառավարման զարգացման արդի միտումները**,** «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», № 2 (24), 2020, էջ 91-99:

յունը: Խորհրդարանը բաղկացած է երկու պալատներից՝ Ստորին կամ Պատգամավորների պալատ և Վերին պալատ կամ Սենատ[5]:

Իտալիայում ընտրական համակարգը բավականին հաճախ է ենթարկվել փոփոխությունների: Մասնավորապես, ընտրական օրենսգրքում փոփոխություններ են տեղի ունեցել 1993, 2005 և 2015 թվականներին: Ամենավերջին փոփոխությունը 2017 թվականի նոյեմբերի 4-ին էր, որով նոր ընտրական համակարգը անվանվեց Rosatellum: Այն Իտալիայի քաղաքական համակարգի կայունացմանն ուղղված՝ վերջին 20 տարում 4-րդ նախաձեռնությունն էր[6]:

Ընտրություններ անցկացնելիս պետության տարածքը բաժանվում է ընտրական շրջանների: Պատգամավորների պալատի ընտրությունների անցկացման համար ձևավորում են 28 ընտրական շրջաններ: Պիեմոնտի, Վենետիկի, Լացիոյի, Կամպանիայի և Սիցիլիայի մարզերը բաժանվում են 2 ընտրական շրջանների, Լոմբարդիան՝ 4: Առանձնացվում է նաև արտասահմանյան մեկ ընտրական շրջան, որտեղից ընտրվում են 12 պատգամավորներ[7]: Արտասահմանյան է համարվում ցանկացած ընտրատարածք, որը գտնվում է ազգային պետության սահմաններից դուրս, բայց որը ճանաչվում է պետության կողմից որպես ընտրատարածք՝ ներկայացնելու իր քաղաքացիներին, որոնք բնակվում են մեկ այլ պետությունում: Այս ընտրատարածքները կազմակերպվում են իրենց քաղաքացիությունը պահպանող արտագաղթած ընտրողներին ներգրավելու համար: Օտար երկրներում Իտալիայի քաղաքացիները կարող են քվեարկել իրենց պետության դիվանագիտական ներկայացուցչություններում՝ էլեկտրոնային քվեարկությամբ (ներառյալ համացանցային քվեարկությունը):

Պատգամավորների պալատում համամասնական ընտրությունների արդյունքում մանդատների բաշխումը տեղի է ունենում Հեյրի մեթոդով՝ առավելագույն մնացորդի կանոնի համաձայն[8]:

Ըստ Սահմանադրության՝ Պատգամավորների պալատը ընտրվում է համընդհանուր և ուղղակի ընտրություններով: Այն բաղկացած է 630 պատգամավորներից, որոնք բաշխվում են մարզերի միջև՝ կախված բնակչության թվից՝ ըստ վերջին համընդհանուր մարդահամարի: Պատգամավորների պալատի անդամ կարող է դառնալ 25 տարին լրացած յուրաքանչյուր անձ, ով ունի իրավունքներ և պարտականություններ. վերջիններս ընտրվում են 18 տարին լրացած Իտալիայի քաղաքացիների կողմից[9]:

---

[5] Տե՛ս **Federico Del Giudice,** Compendio di Diritto Pubblico, "Edizioni Giuridiche Simone", 2021, էջ 100-103:

[6] Տե՛ս Իտալիայի Հանրապետության ընտրական օրենսգիրք, 03.11.2017 թ., https://www.rosatellum.info/

[7] Տե՛ս **Маклаков В. В.** Зарубежное избирательное право: Учебное пособие. «Норма», М., 2003, էջ 59:

[8] Տե՛ս **Է. Քալանթարյան,** Խորհրդարանական կառավարման սահմանադրական կառուցակարգերը (ՀՀ-ի և ԳԴՀ-ի օրինակով), «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2021, № 1 (34), էջ 46-48:

[9] Տե՛ս **Modugno F.,** Diritto Pubblico: IL Parlamento. Università degli Studi Roma Tre, “Roma TrE-Press”, 2017, էջ 226-229:

Ի տարբերություն Պատգամավորների պալատի՝ Սենատը ընտրվում է տարածաշրջանային հիմունքներով: Սենատի անդամ կարող են ընտրվել 40-ից բարձր տարիքի անձինք, որպես բացառություն՝ որոշ սենատորներ նշանակվում են ցմահ: Սենատի ընտրություններն անցկացվում են ուղղակի և համընդհանուր սկզբունքով:

Սենատը բաղկացած է 3 դասի անդամներից՝

– ուղղակի ընտրություններով ընտրված 315 սենատորներ,

– նախկին նախագահներ, որոնք նշանակվում են ցմահ կամ հրաժարվում են այդ կարգավիճակից ինքնակամ,

– որոշակի վաստակի համար նախագահի կողմից ցմահ նշանակված 5 սենատորներ[10]:

Ցմահ սենատորների (senatori a vita) նշանակման գործում ակտիվ դերակատարություն ունի Իտալիայի նախագահը: Սահմանադրական պրակտիկան ցույց է տալիս, որ Իտալիայի նախագահները հավասարակշռված և զգուշավոր մոտեցում են ցուցաբերում այդ նշանակումներին՝ փորձելով չնշանակել անձանց, որոնք պատկանում են նույն կուսակցությանը:

Սենատի ընտրությունների անցկացման համար Իտալիայի տարածքը բաժանվում է 21 շրջանների, որոնցից յուրաքանչյուրը առանձին ընտրական շրջան է, ձևավորվում է նաև 1 հավելյալ արտասահմանյան ընտրական շրջան, որտեղից ընտրվում են 6 սենատորներ: Իտալիայի 20 մարզերը Սենատում ունեն առնվազն 7-ական տեղ, իսկ ավելի հոծ բնակեցված շրջանները Սենատ են ուղարկում ավելի մեծ թվով սենատորների (օրինակ՝ Լոմբարդիա մարզը Սենատ է ուղարկում 47 սենատորի, իսկ Սիցիլիան՝ 26): Մինչդեռ ավելի նոսր բնակեցված շրջանները Սենատում ունեն ավելի քիչ սենատորներ, օրինակ՝ Վալե դ՛Աոստան ունի 1 սենատոր, իսկ Մոլիզեն՝ 2[11]:

Նշենք նաև, որ խորհրդարանի երկու պալատներն էլ իրավահավասար են ինչպես օրենսդրական լիազորությունների առումով, այնպես էլ կառավարության գործունեության նկատմամբ սահմանադրական վերահսկողություն իրականացնելիս:

Իտալիայում խորհրդարանն է ընտրում հանրապետության նախագահին, առաջարկություններ ներկայացնում վերջինիս կառավարության կազմը նշանակելիս, մասնակցում է կառավարչական և դատական մարմինների ձևավորմանը: Խորհրդարանի իրավասության շրջանակներում է նաև պատերազմ հայտարարելը, կառավարությանը լիազորություններ տալը արտակարգ իրավիճակներում, քաղաքական բնույթի միջազգային պայմանագրեր վավերացնելը և այլն: Խորհրդարանի պալատները հաստատում են նաև տարեկան բյուջեի և ծախսերի նախագծերն ու հաշվետվությունները: Նրա գործառույթներից է նաև երկրի տարածքային կառուցվածքի փոփոխություններին վերաբերող

---

[10] Տե՛ս **Carnevale P.,** La costituzione riscritta, Saggi sulla revisione costituzionale in itinere. Università degli Studi Roma Tre, "Roma TrE-Press", 2016 , էջ 48-50:

[11] Տե՛ս **Маклаков В. В.,** նշվ. աշխ., էջ 58:

սահմանադրական օրենքներ ընդունելը[12]:

Պատգամավորների պալատը և Սենատը իրենց աշխատանքները իրականացնում են առանձին: Խորհրդարանը համատեղ նստաշրջաններ հրավիրում է միայն սահմանադրությամբ սահմանված դեպքերում: Դրանցից են հանրապետության նախագահի ընտրությունը, պետական դավաճանության մեջ նախագահին ուղղված մեղադրանքների քննարկումը և այլն[13]:

Խորհրդարանի պալատներից մեկի կողմից տրված անվստահության քվեն բավարար հիմք է կառավարության հրաժարականի համար: Սա նույնպես ընդգծում է խորհրդարանի դերի կարևորությունը՝ նպաստելով «լավ կառավարմանը»: Խորհրդարանի կարգավիճակը բնութագրվում է մի շարք կանոններով: Օրինակ՝ անձը միաժամանակ չի կարող անդամակցել երկու պալատներին: Խորհրդարանականները չեն կարող լինել Սահմանադրական դատարանի անդամներ, ադմինիստրատորներ, համայնքապետներ, քաղաքապետներ, խորհրդականներ, պրեֆեկտուրաների, ոստիկանության և զինված ուժերի բարձրաստիճան սպաներ, դատավորներ և այլն:

Խորհրդարանի անդամների կարգավիճակը որոշելիս Իտալիայի Սահմանադրությունը հետևում է եվրոպական սահմանադրական պրակտիկայում հաստատված սկզբունքին, ըստ որի՝ խորհրդարանի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է ազգը և իր խորհրդարանական գործառույթներն իրականացնելիս կաշկանդված չէ այսպես կոչված «պարտադիր մանդատով»[14]: Պատգամավորի կարգավիճակի բաղկացուցիչ տարրերից է պատգամավորական մանդատի բնույթը: Ներկայումս աշխարհում գոյություն ունի պատգամավորական մանդատի երկու տեսակ՝ ազատ և հրամայական: Հրամայական մանդատին բնորոշ են հետևյալ պարտադիր տարրերը. պատգամավորը ճանաչվում է միայն իրեն ընտրած ընտրատարածքի ներկայացուցիչ, պատգամավորը կաշկանդված է ընտրողների պարտադիր ցուցումներով, պարտավոր է կանոնավոր հաշվետվություն ներկայացնել այդ ցուցումների կատարման վերաբերյալ, իսկ ընտրողները, իրենց հերթին, հնարավորություն ունեն հետ կանչելու պատգամավորին իրենց վստահությունը կորցնելու կամ չարդարացնելու դեպքում[15]:

Խորհրդարանի անդամները չեն կարող հետապնդվել իրենց արտահայտած կարծիքների և խորհրդարանական գործառույթներն իրականացնելիս քվեարկելու համար: Սահմանադրությունը խորհրդարա-

---

[12] Տե՛ս Իտալիայի Հանրապետության Սահմանադրություն, 22 դեկտեմբեր 1947 թ., հոդ. 62-69, https://www.senato.it/documenti/repository/istituzione/costituzione.pdf

[13] Տե՛ս **Баглая М. В., Лейбо Ю. И., Энтина Л. М.** Конституционное право зарубежных стран. М., "Норма", 2004, էջ 520-540:

[14] Տե՛ս Իտալիայի Հանրապետության Սահմանադրություն, 22 դեկտեմբեր 1947 թ., հոդ. 67, https://www.senato.it/documenti/repository/istituzione/costituzione.pdf

[15] Տե՛ս «Եզրակացություն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ, Պ-603-23.09.2014-ՊԻ-010/0, 09 հոկտեմբերի 2014 թ., http://www.parliament.am/draft-_history.php?do-=showdiv-eval&Div=3&ID=6988

նականներին օժտում է քրեական պատասխանատվությունից ամենալայն անձեռնմխելիությամբ: Մասնավորապես, արգելվում է խորհրդարանի անդամին ենթարկել քրեական պատասխանատվության առանց խորհրդարանի համապատասխան պալատի թույլտվության[16]:

Խորհրդարանի երկու պալատները մասնակցում են սահմանադրությունից բխող օրենսդրական գործառույթի իրականացմանը: Օրենսդրական գործընթացը համընդհանուր կերպով կարգավորվում է սահմանադրությամբ, իսկ առավել մանրամասն՝ պալատների կանոնակարգերով: Այդ գործընթացը վերապահված է երկու պալատներին էլ: Այն բաղկացած է մասնավորապես հետևյալ փուլերից՝

1. օրենքի նախագծի ներկայացում,
2. օրենքի նախագծի քննարկում,
3. օրենքի ընդունում,
4. օրենքի վավերացում և հրապարակում նախագահի կողմից[17]:

Ինչպես արդեն նշեցինք, խորհրդարանի երկու պալատներն էլ ունեն նույն լիազորությունները, և պալատների միջև հիմնական տարբերությունը պայմանավորված է դրանց ձևավորման կառուցակարգերով: Իտալիայում այդպիսի համակարգը կոչվում է «իդեալական բիկամերալիզմ»: Նման համակարգի պայմաններում Իտալիայի խորհրդարանի հետ է ասոցացվում նաև «խորհրդարանական պինգ-պոնգ» եզրույթը, երբ օրինագծերի ընդունումը հետաձգվում է տարիներ շարունակ: Այս հանգամանքը պայմանավորված է նաև Իտալիայում ընտրական համակարգով և երկրի քաղաքական լանդշաֆտով: Իշխող կուսակցությունը միշտ չէ, որ ունի պալատներից մեկում ձայների մեծամասնություն: Իրավիճակը փոխելու փորձ կատարել է նախկին վարչապետ Մատտեո Ռենցին: Նա առաջարկում էր իրականացնել երկրի պատմության մեջ ամենամեծ սահմանադրական բարեփոխումը, որով նվազեցվում էին Սենատի լիազորությունները՝ ներառյալ կառավարությանն անվստահություն հայտնելը, փոխվում էր սենատորների ընտրության և ֆինանսավորման համակարգը, կրճատվում էր սենատորների թիվը: Սենատը կարող էր քվեարկել միայն սահմանադրության, սահմանադրական օրենքների, ընտրական օրենսդրության, տեղական ինքնակառավարման մարմինների մասին օրենքների, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի վավերացման համար: Այլ իրավասությունների ոլորտները վերապահվելու էին բացառապես Պատգամավորների պալատին: Այնուամենայնիվ, 2016-ի դեկտեմբերին Իտալիայի Հանրապետության ժողովուրդը «ոչ» ասաց երկրի սահմանադրական փոփոխություններին[18]:

Այսօր Իտալիայի Հանրապետության Սենատը ունի նույն լիազորությունները, ինչ նախկինում: Սենատորները ակտիվորեն քննարկում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության վերաբերյալ

---

[16] Տե՛ս **Modugno F.,** նշվ. աշխ., էջ 233-235:

[17] Տե՛ս **Է. Քալանթարյան,** նշվ. աշխ., էջ 96:

[18] Տե՛ս **Alba G.,** Il bicameralismo paritario nel procedimento legislativo ordinario: tra Pars destruens e pars costruens. Seminario di studi e ricerche parlamentari «Silvano Tosi», 2018, էջ 9-16:

հարցեր։ Հաճախ Իտալիայի մասնակցությունը այս կամ այն միջազգային նախաձեռնությանը կամ կոալիցիային կախված է նրանց քվեներից[19]։

Իտալիայի քաղաքական համակարգի ծայրաստիճան անկայունությունը որոշ վերլուծաբաններ համարում են տարբերակիչ առանձնահատկություն, ոմանք՝ թերություն։ Հաճախակի են քաղաքական և կառավարչական ճգնաժամերը, քանի որ երբեմն Իտալիայում կառավարությունները փոխվել են ընդդիմության բառացիորեն մի քանի ձայնի պատճառով։

Այս ամենը ոչ այնքան դրական ազդեցություն ունեցավ պետական արդյունավետ կառավարման վրա։ Իհարկե, 2017 թվականին ընդունված նոր ընտրական օրենսգիրքը (Rosatellum-ը) որոշակի դրական միտումներ բերեց ընդհանուր կառավարման համակարգ, սակայն գործնականում դեռևս անելիքները բազմաթիվ են։

Ընտրական բարեփոխումը ենթադրում է խառը՝ համամասնական և մեծամասնական համակարգ, ըստ որի՝ սենատորների և պատգամավորների 1/3-ը ընտրվում է միամանդատ շրջաններում մեծամասնական համակարգով (կուսակցության միայն մեկ թեկնածու է ընտրվում ձայների մեծամասնությամբ), իսկ մնացած 2/3-ը ընտրվում է կուսակցական ցուցակներով՝ համամասնական համակարգով։ Երկու պալատներում էլ ընտրական շեմը սահմանված է 3%՝ կուսակցությունների և 10% կոալիցիաների համար։ Ընտրողը ձայն է տալիս կոնկրետ թեկնածուին միամանդատ ընտրական շրջանում և կուսակցական ցուցակին[20]։

Ինչպես Mattarellum-ի (օրենքն այսպես է անվանվել ի պատիվ ստեղծողի՝ Սերջիո Մատարելլայի։ Այն Իտալիայում գործող ընտրական համակարգն էր 1993-2005 թթ.) դեպքում, նոր ընտրական համակարգով ևս Պատգամավորների պալատի 232 և Սենատի 116 թեկնածուները, որոնք միամանդատ շրջաններում ստացել են առավելագույն ձայներ, իրենց տեղերը խորհրդարանի համապատասխան պալատներում ստանում են ուղղակիորեն, նույնիսկ եթե մրցակցից ընդամենը մեկ ձայն են ավել ստացել[21]։

Այսպես, Իտալիայի վերջին՝ 2018 թվականի խորհրդարանական ընտրություններում մեծ հաջողություն գրանցեցին երկու ընդդիմադիր կուսակցություններ՝ «5 աստղերի շարժումը» և «Հյուսիսային լիգան»։ «5 աստղերի շարժումը» կարողացավ ամրապնդել իր դիրքերը՝ հավաքելով ձայների 32,68%-ը, որն ավելին էր, քան նախորդ ընտրություններում (2013 թ.) գրանցած արդյունքը։ Սակայն առաջին տեղում հայտնվեց աջ

---

[19] Տե՛ս **Белова В**. О некоторых аспектах деятельности верхних палат парламентов ряда стран ЕС. Институт Европы РАН, Аналитическая записка №15, 2017 (№88), էջ 5։

[20] Տե՛ս Il sistema di elezione del Parlamento nazionale: L'approvazione della legge n. 165 del 2017: il percorso parlamentare. La documentazione dei Servizi e degli Uffici del Senato della Repubblica e della Camera dei Deputati, Febbraio 2020, էջ 107-112, https://www.senatì.it/service-/PDF-/PDFServe-r/BGT/01176918.pdf։

[21] Տե՛ս Il sistema di elezione del Parlamento nazionale: Le leggi n. 276 e n. 277 del 1993 (c.d. legge Mattarella). La documentazione dei Servizi e degli Uffici del Senato della Repubblica e della Camera dei Deputati, Febbraio 2020, էջ 121-132, https://www.senato.it/service/PDF/PDFServer/BGT/01176918.pdf

կոալիցիան, որը միավորում էր «Առա՛ջ, Իտալիա՛», «Հյուսիսային լիգա» և «Իտալիայի եղբայրներ-ազգային ալյանս» կուսակցությունները, որոնք համատեղ հավաքեցին ձայների 37%-ը: Սակայն աջ կոալիցիան, միևնույնն է, չկարողացավ ստանալ ձայների բացարձակ մեծամասնությունը: Այս կոալիցիայի կուսակցությունների շարքում, ինչպես արդեն նշեցինք, հաջողություն գրանցեց «Հյուսիսային լիգան», որն առաջ անցավ «Առա՛ջ, Իտալիա՛» կուսակցությունից՝ հավաքելով ձայների 17,37%-ը: Ընդ որում, պետք է նշել, որ «Հյուսիսային լիգա» և «Առա՛ջ, Իտալիա՛» կուսակցությունները աջ կոալիցիայի շրջանակներում ունեին պայմանավորվածություն, ըստ որի՝ առավել շատ ձայներ հավաքած կուսակցությունը կստանա առավելություն կառավարություն ձևավորելիս, եթե, իհարկե, կոալիցիան ստանա նաև կառավարություն ձևավորելու իրավունք: «Առա՛ջ, Իտալիա՛» կուսակցությունը հավաքեց ձայների 14,01%-ը, որը դարձավ վերջինիս քաղաքական պատմության ամենացածր արդյունքը[22]:

Ծանր պարտություն կրեց նաև ձախ կենտրոնամետ Իտալիայի դեմոկրատական կուսակցությունը՝ հավաքելով ընդամենը ձայների 18,72%-ը, որը կուսակցության հիմնադրումից ի վեր (2007 թ.) գրանցված ամենացածր արդյունքն էր: Ընդհանուր առմամբ ձախ կենտրոնամետ կոալիցիան հավաքեց ձայների 22,85%-ը:

Արդյունքում, համաձայն Իտալիայի նոր ընտրական օրենսգրքի (Rosatellum՝ Իտալիայի Հանրապետության ընտրական օրենքն է, որը կարգավորում է Պատգամավորների պալատի և Սենատի ընտրությունը: Օրենքի հեղինակը Էտորե Ռոսատոն է, այն պաշտոնապես ընդունվել է 2017 թ. նոյեմբերի 3–ին)՝ ընտրություններին մասնակցած ոչ մի կուսակցություն չկարողացավ հավաքել ձայների անհրաժեշտ քանակը, որպեսզի միայնակ ձևավորի նոր կառավարությունը: Այս առնչությամբ «La Repubblica» թերթի գլխավոր խմբագիր Կլաուդիո Տիտոն գրեց. «Իտալական քաղաքական համակարգի դատավճիռը մնում է նույնը. երկիրը տառապում է մշտական անկայունությամբ: Հիմա այդ հիվանդությունը վերածվում է համաճարակի»[23]:

Թեև ընտրությունների արդյունքում պաշտոնապես հաղթող ճանաչվեց «5 աստղերի շարժում» կուսակցությունը, քանի որ կոալիցիայի անդամ չէր և միայնակ հավաքել էր ձայների 32,68%-ը, այնուամենայնիվ այն ի վիճակի չէր ինքնուրույն ձևավորել կառավարություն: Ուստի սկսեցին քննարկվել այլ կուսակցությունների հետ կոալիցիոն կառավարություն ձևավորելու հնարավոր տարբերակները, թեպետ ընտրարշավի ընթացքում կոալիցիա ձևավորելու գաղափարները կուսակցության ծրագրերում բացառվում էին:

Ինչպես նշում է ֆրանսիական «Sciene Po» գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող Մարկ Լազարը, «5 աստղերի շարժում»

---

[22] Տե՛ս ԻՀ 2018 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքներ, https://elezioni.repubblica.i-t/2018/cameradeideputati

[23] **Tito C.,** Elezioni 2018: un altro referendum su Renzi, una sconfitta lunga 15 mesi, 05 Marzo 2018, https://www.repubblica.it/politica/2018/03/05/news/elezioni_renzi_pd-300954258/

կուսակցության օգտին քվեարկելը ոչ միայն բողոք արտահայտելու ձև էր գոյություն ունեցող իշխանության դեմ, այլ նաև այդ կուսակցությունը փաստացի որպես իրական քաղաքական ուժ ճանաչելու: Այս շարժումը բավականին հանրաճանաչ է: Մարկ Լազարի կարծիքով՝ այս կուսակցության առաջնորդ Լուիջի Դի Մայոն պետք է ստանձնի պատասխանատվությունը երկրի ապագայի համար, ուստի պետք է լինի բավարար իրավասու այդ հարցում: Իսկ դա չի բացառում նաև այլ կուսակցությունների հետ միությունների ձևավորումը, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ կառավարել երկիրը[24]:

Կառավարության ձևավորման նախաշեմին Իտալիայի նախագահ Սերջո Մատարելլան ընտրություններում առավելագույն ձայներ ստացած կուսակցությունների առջև դրեց խիստ պայմաններ՝ պահանջելով պահպանել երկրի արտաքին քաղաքական կուրսի հիմնական ուղղությունները: Երկարատև բանակցություններից հետո ձևավորվեց նոր, այսպես կոչված, «դեղին-կանաչ» կառավարություն, որտեղ դեղինը խորհրդանշում էր «5 աստղերի շարժումը», իսկ կանաչը՝ «Հյուսիսային լիգան»[25]: Կառավարությունը գլխավորեց Ջուզեպե Կոնտեն, որն արժանացավ «5 աստղերի շարժման» հավանությանը: Երկու կուսակցությունների ղեկավարները՝ Լուիջի դի Մայոն և Մատեո Սալվինին, որոնք հավակնում էին վարչապետի պաշտոնին, ստիպված եղան ընդունել փոխվարչապետի պաշտոնը, ավելի ուշ դերերը փոխվեցին:

Պետք է նշել, որ Իտալիան քաղաքական համակարգի անկայունությունից ամբողջապես խուսափել այնուամենայնիվ չկարողացավ, ինչի առաջին դրսևորումը եղավ հենց ընտրություններից կարճ ժամանակ անց Ջ.Կոնտեի հայտարարությունը կառավարություն ձևավորելու մանդատից հրաժարվելու մասին, որի պատճառը կառավարություն ձևավորելու համար թեկնածուների ընտրության հարցում նախագահ Ս. Մատարելլայի հետ անհամաձայնություններն էին[26]: Թեկուզ վերոնշյալ տարաձայնությունները հարթվեցին, սակայն 2021 թվականին Իտալիայում սկսվեց հերթական կառավարական ճգնաժամը. Իտալիայի վարչապետ Ջ. Կոնտեն նախագահին ներկայացրեց հրաժարական, ինչը ենթադրում էր կառավարության աշխատանքի ավարտ[27]:

Իտալիայի նախագահ Ս. Մատարելլան, խուսափելով կրկին արտահերթ ընտրությունների անցկացումից, առաջարկեց զբաղեցնել վարչապետի պաշտոնը Եվրոպական կենտրոնական բանկի նախկին նախագահ Մարիո Դրագիին, որպեսզի վերջ տրվի քաղաքական տարաձայնություններին և արդյունավետ պայքար մղվի կորոնավիրուսի և դ-

---

[24] Տե՛ս **Lazar M.,** An Uncertain Italy, https://www.iemed.org/publication/an-uncertain-italy/

[25] Տե՛ս Կոնտեի կառավարությունը՝ «դեղին-կանաչ» մեծամասնությամբ, https://www.openpolis.i-t/govern-o-conte-e-maggioranza-giallo-verde/

[26] Տե՛ս Քննարկումներ նոր կառավարության ձևավորման շուրջ, 27.05.2018, https://www.repubblica.it/politica/2018/05/27/news/il_premier_incaricato_rimette_il_mandato-197504092/

[27] Տե՛ս Կոնտեի հրաժարականը. կառավարության հերթական ճգնաժամը, 26.01.2021, https://www.repubblica.it/politica/2021/01/26/news/crisi_governo_procedura_formazione_nuovo_governo-284178532/

բանով պայմանավորված տնտեսական ճգնաժամի դեմ[28]:

Այսպիսով, թեև Իտալիայի խորհրդարանական կառավարման համակարգը անցել է տարբեր պարադիգմների (հարացույցների) փոփոխության բավականին երկար և դժվարին ճանապարհով, սակայն դեռևս շարունակում է պահպանել իր անկայունությունը: Այս համակարգի թուլությունը պայմանավորված է ոչ միայն ներխորհրդարանական անկայուն իրավաքաղաքական կառուցակարգերով, այլև որոշ դեպքերում նույնիսկ քաղաքական կուսակցությունների տարաձայնություններով: Եվ չնայած իրականացված մի շարք բարեփոխումներին՝ այնուամենայնիվ դժվար է կանխատեսել, թե արդյոք հնարավոր կլինի խուսափել հետագա քաղաքական ճգնաժամերից:

ЭДГАР КАЛАНТАРЯН – ***Избирательная система Итальянской Республики***. – В ряде послевоенных европейских стран были проведены реформы по модернизации и демократизации государственного управления. Итальянская Республика не была исключением. На протяжении своей истории в плане конституционных институтов страна прошла через конституционную монархию, тоталитарную фашистскую диктатуру, сформировав таким образом самую демократическую конституцию послевоенной Европы. Конституция Италии четко регламентирует систему правления, в основе которой лежит принцип разделения властей. Все это регулируется регламентом избирательных систем. Их довольно часто меняли в Италии, показывая некоторую слабость. Это обусловлено не только нестабильностью внутрипарламентских политико-правовых структур, но в некоторых случаях даже разногласиями политических партий.

Ключевые слова: *система государственного управления, избирательная система, конституционный строй, форма управления, законодательный процесс, распределение мандатов, парламентское управление, конституционные изменения, пропорциональная избирательная система, голосование, кризис управления, политический кризис, эффективное управление*

EDGAR KALANTARYAN – ***The Electoral System of the Republic of Italy.*** – In a number of post-war European countries, reforms were carried out to modernize and democratize public administration. The Italian Republic was not an exception. Throughout its history, in the course of constitutional institutions, it had gone through the constitutional monarchy, totalitarian fascist dictatorship, thus forming the most democratic constitution of the post-war Europe. The Italian Constitution clearly regulates the system of government, which is based on the principle of separation of powers. All this is regulated by the regulation of electoral systems. They have been changed quite often in Italy, showing a certain weakness. This is conditioned not only by unstable intra-parliamentary legal-political structures, but in some cases even by the disagreements of political parties.

Key words: *government system, electoral system, constitutional system, form of government, legislative process, distribution of mandates, parliamentary government, constitutional changes, proportional electoral system, voting, government crisis, political crisis, effective government*

[28] Տե՛ս Դրագիի գլխավորությամբ նոր կառավարության ձևավորումը, 12.02.2021, https://www.quirinale.it/elementi/52198